

ձեռք բերելով զանի իրենց կուսանաց ճգնութեան տեղի ընել . սակայն եկեղեցին բոլորովին չկարացին իրենց իւրացնել, ինչպէս որ կը գրէ ժամանակակից և ականատես նոյն Յակոբ քահանայն Ամասիացի և կ'ըսէ՝ «այս եղև սակս թողելուն Արարացուոց ամայի, ուր հրբեմն մերս կուսանք ճգնէին, ապա յօրինակ առեալ ի նոյրունց լատինք, յիւրեանց կուսանին բնակեցուցին քանի ինչ խրճիթս շինելով անդ. թէպէտև ոչ երկարատեւեաց զայն. քանզի ոչ միայն ոչ թոյլ ետուն Արարացիք, այլ եւ հովիւն մեր տրթուն (այն է Գրիգոր Պարոնտէր հոգեւոյն հայրապետն) ըստ իւրում արթնութեամբն առիթս առեալ նա եւս թախանձեաց զեկեղեցին հրաշակառոյց բերել ի ձեռս, որ քաղմօք յառաջ ամօք՝ յափշտակեալ էր Սալահէտտին ի ձեռաց նախնեաց մերոց (Պատմ. Մրբոյ Երկրիև. ձեռ.)»: Բաց ի սոյն պատմութենէն այլ եւ Հաննէի պատմութենէն ալ կ'երեւի, ուր կ'ըսէ, թէ՝ «յորում բնակէին (կուսանք) ի ժամանակս խաղաղութեան, և այժմ աւերք են (հիմա խրճիթք կուսանաց) և ոչ ոք բնակի ի նոսա (Պատմ. Հան. եր. 229. Տիպ. Պօլ. 1782)»: Այս «ի ժամանակս խաղաղութեան բնակէին կուսանք» ըսածն ալ՝ լատինաց համար հասկնալու չէ, այլ նախնեաց ժամանակի եղածը կ'ակնարկէ Հաննէին զուրցածը, թէպէտև ինքը չ'որոշեր որ ազգին կուսանքը ըլլալ:

Եւ ահա՛ Բանին իսկ եղելութիւնը, մեր ձեռքը գտնուած յիշատակարաններուն և արձանագրութիւններուն, նաև մինչև ցարդ բերնէ բերան անցած աւանդութիւններուն նայելով Չամուրճեանին վկայ բերած Անաստաս վարդապետին ցուցակին մէջ ալ կայ, ուր կը գրէ յիշեալ վարդապետը՝ թէպէտև առանց անունը տալու այսպէս. «20րդ՝ Արշակունեաց վանքն՝ որ առ պրօպատիկէիւ» կ'ըսէ. որ եւ այս տեղեկութիւնը առաւել եւս կը ստուգէ մեր վերը դրած պատմութիւնը, և որով յիշեալ եկեղեցին մերն ըլլալը յայտնի ցցունէ. քանզի Սալահէտտինին յափշտակութենէն գրեա թէ հինգ դար յառաջ գրուած է՝ յիշեալ ցուցակը ու տեղեկագիրը. և որովհետև պրօպատիկէ աւագանին մերձ ի նախնեաց անտի մինչև ցայսօր՝ ուրիշ ո'չ վանք մը, ոչ եկեղեցի մը կայ ու եղած է, բաց ի Յովակիմ-Աննայի տունէն. վասնորոյ առանց տարակուսութիւն մը յարուցանելու կ'ենթադրենք թէ՝ անպատճառ յիշեալ Յովակիմ-Աննայի տունն է՝ Անաստաս վարդապետին ցուցուցած վանքը, և անոր շինութիւնն